

### 9. Քաղաքային բնակավայրերի ճանապարհային տնտեսության բարեկարգվածություն

Ըստ ճանապարհային տնտեսության բարեկարգվածությունն իրականացնող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2001թ. հանրապետության քաղաքային բնակավայրերի փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը կազմել է 3196.5 կմ (2000թ.՝ 3250.5 կմ), այդ թվում՝ երթևեկելի մասում որևէ տեսակի ծածկույթ ունեցող բարեկարգված մասի երկարությունը՝ 2754.5 կմ կամ 86.0% (2000թ.՝ 2804.1 կմ կամ 86.0%), որից կատարելագործված տեսակի ծածկույթովը՝ 2156.5 կմ կամ 78.0% (2000թ.՝ 2247.1 կմ կամ 80.0%): Երևան քաղաքում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 806.9, 776.3 և 732.0 կմ:

#### Քաղաքային բնակավայրերի փողոցների և անցումների ընդհանուր երկարությունն ըստ մարզերի, 2001թ.

(կմ)

	Ընդամենը	որից՝ բարեկարգված	դրանից՝ կատարելագործված
ք.Երևան	806.9	776.3	732.0
Արագածոտն	90.0	50.2	36.1
Արարատ	231.3	174.8	109.5
Արմավիր	165.6	117.0	117.0
Գեղարքունիք	251.7	195.8	133.4
Լոռի	438.0	335.4	162.6
Կոտայք	405.5	386.5	340.3
Շիրակ	340.3	321.4	229.2
Սյունիք	220.4	194.2	173.8
Վայոց ձոր	94.0	76.7	75.5
Տավուշ	152.8	126.2	47.1
Ընդամենը ՀՀ	3196.5	2754.5	2156.5

2001թ. հանրապետության քաղաքային բնակավայրերի փողոցների, անցումների և հրապարակների (ներառյալ մայթերի) ընդհանուր մակերեսը կազմել է 41736.5 հազ. քառ. մ (2000թ.՝ 42580.9 հազ. քառ. մ): Դրանցից բարեկարգված մասերի մակերեսը կազմել է 36242.4 հազ. քառ. մ կամ 87.0%, որից կատարելագործված տեսակի ծածկույթովը՝ 29942.1 հազ. քառ. մ կամ 83.0%:

#### Քաղաքային բնակավայրերի փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսն ըստ մարզերի, 2001թ.

(հազ. քառ. մ)

	Ընդամենը	որից՝ բարեկարգված	դրանից՝ կատարելագործված
ք.Երևան	15760.0	14430.0	13165.0
Արագածոտն	747.2	606.9	514.0
Արարատ	2467.0	2090.0	1807.0
Արմավիր	2421.9	1870.7	1870.7
Գեղարքունիք	2683.2	2007.2	1336.2
Լոռի	3987.5	3023.5	1305.4
Կոտայք	5096.2	4735.7	4229.7
Շիրակ	3520.0	3335.1	2544.3
Սյունիք	2603.7	2176.2	1901.2
Վայոց ձոր	1058.0	816.0	809.0
Տավուշ	1391.8	1151.1	459.6
Ընդամենը ՀՀ	41736.5	36242.4	29942.1

2001թ. ճանապարհային տնտեսության բարեկարգվածությունն իրականացնող կազմակերպությունների տարեկան մուտքերը բյուջեից կազմել է 618.3 մլն. դրամ (2000թ.՝ 485.6 մլն. դրամ), դրամական ծախսերը՝ 765.2 մլն. դրամ (2000թ.՝ 522.6 մլն. դրամ): Ըստ ծախսումների առանձին հոդվածների, ծախսերի դասակարգումը հետևյալն է՝ 51.9%-ը՝ ոչ նյութական ծառայությունների վճարումներ, 16.0%-ը՝ նյութական ծախսեր, 13.4%-ը՝ աշխատավարձի կամ դրան հավասարեցված վճարումներ, 9.3%-ը՝ գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր, 4.3%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, մնացածը՝ այլ բնույթի ծախսեր: